

# Տնտեսական ներդրում

## Ծրագրի ներդրումները տեղական և ազգային տնտեսության մեջ

- Շահագործման ընթացքում Ծրագիրը կապահովի 485 մլն. ԱՄՆ դոլարի պետական եկամուտ:
- Շինարարության ընթացքում մոտավորապես 1300 մարդ, իսկ շահագործման փուլում՝ 657 մարդ կապահովվի աշխատանքով: Լիդիանը պարտավորվել է աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալ տեղացիներին, ինչպես նաև պահանջել դա իր հիմնական կապալառուներից: Լիդիան ընկերության նպատակն է գործառնական պարտականությունների առնվազն 30% տրամադրել տեղացիներին:
- Լիդիան ընկերությունը շարունակելու է աջակցել համայնքային ծրագրերին՝ համագործակցելով համայնքների ղեկավարների և առանձին խմբերի հետ: 2009թ. սկսած ներդրվում է տարեկան մոտ 400 000 ԱՄՆ դոլար տեղական համայնքներում գյուղատնտեսական, կրթական, առողջապահական և այլ նախաձեռնություններին աջակցելու նպատակով:



## Դրական ազդեցությունները առավելագույնին հասցնելու համար նախատեսվող միջոցառումները

- Լիդիանը շարունակելու է տեղական և պետական մակարդակով վճարվող ռոյալթիների և հարկերի գումարների հրապարակումը: Ընկերությունը Հայաստանում և միջազգային մակարդակով Արդյունահանող ճյուղերի գործունեության թափանցիկության նախաձեռնության իրականացման ակտիվ կողմնակից է :

- Լիդիանի կողմից մշակվում է Ծրագրային հմտությունների բարելավման ուղղված մասնագիտական վերապատրաստման ծրագիր՝ հայ մասնագետների համար: Նախապատվությունը նման ծրագրերի շրջանակներում տրվելու է տեղացիներին: